

Ք Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ի Դ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Բ Ա Ց Վ Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱՎԱԳՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄԱՐՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂԱՌԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մ» չափի տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվա-
նը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը
5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճա-
րեն տարեկան 6 դոլար. Ս լ ը ռ յ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս տ ա ն ի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ (Բաղարայան և Բարձրակայան փողոցների անկիւն):

Կայրութեան ուրիշ թղթագրութիւն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է գրվել նետեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Մի քայլ առաջ.— ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յու-
ցաւորութիւնը մեր մէջ. Ներքին շուկան.— ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Նա-
մակ Պարսկաստանից. — ԽԱՆԻՆ ԼՈՒՆԵՐ. — ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Ոճրագործը.

ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ

Ձեռնարկում կամ տեղական ինքնավարու-
թիւն մտնելու խնդրել, որ ահա մի քա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՈՃՐԱԳՈՐԾԸ

II

Ն. Սրբախ, ով էր Նիկոնը, որ Նիկոնի տան
հարկը դառնար: Սաքուններում, հարկատուներում,
գիւղամիջում այս հարցը հասարակական քն-
նադատութեան առարկայ դարձաւ: Ընդհանուր
վճարն եղաւ, որ Նիկոնը, հացթուխ Գեօղալի
աղջկէն, Նիկոնից Օհանիս սող չի գալ, Օհանը
նրան չը պէտք է առնէ, ինչ անենք որ սիրում է:
Սէրը որն է, որի հետ պսակվի, նրան էլ կը սիրի:
Բայց Օհանը լսել չուզեց այդ բանակալ վճար մա-
սին. հայր չունէր, բողոքող մեծ եղբայրը՝ Գրիգորը
պիտի լինէր. սա էլ մի փոքր ընդդիմացաւ, օ-
ջախի պատկից խօսեց, բայց երբոր վճարակա-
նութեան առաջ ստիպված եղաւ խոնարհվել ա-
կամայ, որովհետեւ Օհանը տանը միակ աշխա-
տաւորն էր, տան սինն էր, օջախը նրա գըլ-
խովն էր շէն, չուզեց սիրտը կոտրել, տունը իր
համաձայնութիւնը, բայց խորին ատելութեամբ
ընկած մնաց դէպի հացթուխի «աներես» աղջի-
կը, որ իր եղբորն այնպէս խեղճան էր արել:
Երբ հարսանիքի օրը առաջին անգամ Գրի-
գորը իր խնամու ծնող-մորտ, աղքատիկ խըր-
ճիթը տոբ կրկեց, երբ տեսաւ որ բազմաթիւ
հարսնաւորներին զիմաւորելու համար միայն
պառաւ Գեօղալին է դուրս եկել իր ողորմելի,
գնու զգեստներով, քիչ մնաց, որ ամօթից հալ-
վի, կամ դռնից յետ դառնայ: Փռձմանց իր
ուշ էր: Եւ նստել մի ամօթ, վեր դալը երկու
ամօթ, մտածեց Գրիգորը և կուլ տուց իր խայ-
տաւակութիւնը:

Սակայն մի անգոր կատաղութիւն, բռնաւ ա-

նի տարի է զբաղեցնում է Թիֆլիսի և
Քութայիսի նահանգների ազնուականու-
թեանը՝ մօտեցել է իր վախճանական զը-
րութեան: Ուրախութեամբ կարող ենք
յայտնել, որ ազնուականութեան խորհր-
դակցութեան մէջ, որ կայացաւ երեքշաբ-
թի, փետրվարի 16-ին՝ զեմնավո մտնելու
հարցը արժանացաւ մեծամասնութեան
համակրանքին: Ազնուականութեան կայաց-
րած միջթարական որոշումը կը ստանայ
պաշտօնական ձևակերպութիւն արտակարգ
նիստում, որ յատուկ այդ նպատակով հը-
րաւիրվում է առաջիկայ մարտ ամսի 2-ին:

տեղութիւն մնաց նրա սրտում դէպի Նիկոնը,
դէպի իր հարսը, որ Նիկոնից օջախը ծաղրի ա-
ռարկայ դարձրեց ամբողջ գիւղում:

Բազմաթիւ դառնութիւններից, անքուն գի-
շերներից, ամօթից, նախատնիցից յետոյ սիրա-
հարկները վերջապէս կարողացան իրանց սէրը
խիչ ամբողջ ձեռքից, քաշել հրապարակներից,
փողոցներից, աղաւթի անտեղի վարսահալութիւն-
ներից և տեղաւորել Նիկոնից յարկի տակ,
խաղաղ և ուրախ վայելելու համար:

Սկսվեց մի երջանիկ կեանք, որ ասես յաւի-
տեան պիտի շարունակվէր: Գրիգորն էլ ըստ ե-
րևոյթի մտապահ էր օջախին հասած անար-
գանքը, նրա դէմքն առաջվայ պէս դայրացկաւ
արտայայտութիւն չէր ընդունում հարսին տես-
նելու ժամանակ, երբեմն նոյն իսկ ժպտում էլ
էր, երբ Նիկոնը երկեցները գալիս էր նրա ան-
կողմը յարգարեւու, մօտը չուր դնելու և այլ
ծառայութիւններ մատուցանելու: Անցան օրեր
և ամիսներ:

Մի օր Գրիգորը տուն եկաւ գիւղամիջից:
Մօտայ ամպեր կային ճակատին. նա կատաղի
աչքերով նայեց հարսին. վերջինս սարսուռ հա-
յեցքից, այն աստիճան չարագուշակ էր նա:
Ի՞նչ էր պատահել: Ընդհանուր զինուորագործութիւ-
նը մտքովում էր Վովկասում, «աղաղակ» պիտի
տանեն շուտով, խօսում էին գիւղացիները
փսփոսով: «Սաղաթ» — այս բառից սարսուռում
էին այն ժամանակ ծնողները: Իւրաքանչիւրն
այդ բառի տակ հասկանում էր միայն պատե-
րազմ, անխուսափելի մահ, արհւն: Ն. հասկա-
նալի է, թէ ինչպէս դողում էին ծնողները ի-
րանց զաւակների կեանքի համար. սրտեր կա-
յին, որոնցից արիւն էր քամվում. ինչ երգեր
յօրինվեցան, որքան ողբեր շարադրվեցան:

Գրեկ էին Դ... գիւղի բոլոր 21 տարեկան ե-
րիտասարդներին, իսկ Օհանը ճիշդ այդ տարին
ունէր, նա էլ կար ցուցակում. ահա Գրիգորի

Այդպիսով երկու շաբաթից յետոյ ընթացք
կը ստանայ մեր երկրի շահերին նպաստող
այդ խոշոր հիմնարկութեան մասին եղած
սկզբնական նախապատրաստական գործու-
նէութիւնը: Ազնուականութիւնը կարծում
է, որ զեմնավոն պէտք է մտնել այն ծա-
ւարով, ինչպէս նա գործում է Ռուսաս-
տանի ներքին նահանգներում, առանց են-
թարկելու կրճատումներին:

Ձեմնավոն կամ տեղական ինքնավարու-
թեան պահանջը մեր երկրի մէջ օրից
օր աւելի և աւելի է զգացվում: Մեր
գաւառը զուրկ է կազմակերպութիւնից:
Այդ պատճառով ո՛չ վարչական, ո՛չ տնտե-
սական, ո՛չ բժշկական և սանիտարական,
ո՛չ կրթական և ո՛չ հաղորդակցութեան
վերաբերեալ բարեփոխութիւններ չեն կա-
րողանում մուտք գործել, պատաստվել և
հաստատվել գաւառի մէջ: Այդ պատճա-
ռով ազգաբնակչութիւնը կարված է մնում
զեկավարող շրջանից, անտէր և անխնամ
վիճակի մէջ, իսկ վարչութիւնը զրկվում
է տեղական տարրի գործակցութիւնից, որ
այնքան կարեւոր է հակառ առաջադիմու-
թիւն կատարելու համար:

Բոլոր այն տեղերում, ուր մտքովն է
զեմնավոն՝ առաջ են եկել զգալի փոփոխու-
թիւններ կեանքի մէջ: Ձեմնավոն աշուղե-
ցրել է մտնել զանազան բարեփոխութիւն-
ներ կեանքի մէջ աւելի ձեռնտու, նպա-
տակայարմար և էփան գնով՝ քան նախ-
կին գործավարութեան ձևերով, և կարո-
ղացել է օգտվել տեղային նախաձեռնու-
թիւնից՝ ժամանակին կատարելու իր պար-
տաւորութիւնները ազգաբնակչութեան ա-
ռաջ և հոգալու նրա անհրաժեշտ կարիք-
ների մասին:

Վերջին տասնեակ տարիների ընթաց-
քում Ռուսաստանի ներքին նահանգների
մի քանի զեմնավոներին, օրինակ, Վետա-
կայում, Պերմում, Պոլտավայում, Մոսկվայ-
ում և այլն, աշուղեց իրագործել տնտե-
սական մի շարք բարեփոխութիւններ,

իրգրվածներ, նրա մօտայ տրամադրութեան
պատճառը: Օհանը կարող է զինուոր դնալ և ան-
պատճառ կը գնայ, մտածում էր նա: Ն. ով էր
այդ դարձուրդի շարքի պատճառը, եթէ ոչ այդ
սե բերեց այս օջախի գլխին: Նախկին ատելու-
թեան հուրը կրկին բորբոքվեց նրա սրտում:

Օհանին սպառնացող այս անարկու վտանգը
և Գրիգորի տարօրինակ վարմունքի պատճառը
չառ ուշ իմացաւ Նիկոնը, և ապա աշխատեց
դուրս քշել իր մտքից այդ վտանգի հնարաւո-
րութեան գաղափարը. գեղջկուհու միամտու-
թեամբ նա նոյն իսկ սկսեց իրան հաւատացնել,
թէ գուցէ աշխարհում ոչ ոք չը գիտէ թէ Օհա-
նը 21 տարեկան է: Ն. հրտեղից պիտի իմանան
այդ բանը. տէրտէքները գրում են, բայց իրանց
տէրտէքը այդ սովորութիւնը չունէր. վերջապէս՝
եթէ իմանան էլ, Օհանին երկի չեն տանի, չէ
որ Օհանը պսակված է, կին ունի:

Նրան չեն տանի, այսպէս վճռեց Նիկոնը...
և հանգիստ էր Բայց մի օր աղբիւրից ջուր բե-
րելիս մի ընկերուհին խորհրդաւոր եղանակով
նրան ասաց.

— Աղբիւր, Նիկոն, սաղաթ են տանում, ձեր Օ-
հանն էլ 21 տարեկան է. նրան էլ կը տանեն,
սխաւոր:

Ասես մէկը Նիկոնի գլխին մահացու հարուած
իջեցրեց: Ապա նա սաստիկ կատաղեց ընկերու-
հու չար գուշակութիւններից և էլ չիմանալով
ինչ պատասխանել, անիծեց նրան խիտ բա-
նեցով: Սարսուռով բռնված նա մոռացաւ իր
սափորը ջրի ափին, և շտապեց դէպի տուն:
Օհանին տեսնելու պահանջը անցաղբիւրի էր.
նրան մի քաղէ նոյն իսկ թւաց, թէ այն բո-
ւրէն, երբ ինքը աղբիւրի ափին էր, Օհանին տա-
նում են, ուստի նա վազում էր, որ շուտով
հասնէ, մէկ էլ տեսնէ իր սիրած ժարդու պատ-
կերը: Նա մտածում էր համեմ, բռնել, չը

մտնել գիւղական կեանքի մէջ կատարե-
լագործված մեքենաներ, նոր բոյսեր և
սերմեր, ազնուացրած կենդանիների տե-
սակներ, զարգացնել մեղուաբուծութիւն,
բանջարաբուծութիւն և զանազան տեսակ
արհեստներ: Ձեմնավոն այդ ասպարէզում
կատարած գործունէութիւնը արդէն զը-
նահատված է բարձրագոյն շրջաններում, և
երկրագործութեան միջնորդութիւնը որո-
շել է զեմնավոն միջոցով իրագործել տըն-
տեսական բարեփոխման մի շարք ծրագիրներ:
Մեր երկրի համար, ուր արդէն սկսվել է
կանոնաւոր կուլտուրական կեանք, որը տըն-
տեսական նոր պայմանների պատճառով
ստիպված է բարեփոխութիւններ մտնել
իր կեանքի մէջ՝ զեմնավոն մտնելը դար-
ձել է ժամանակակից պահանջ և առաջա-
դիմութեան մի անհրաժեշտ պայման:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ

Յուցամիջութիւնը չափազանց տարածված է
մեր հասարակութեան բոլոր դասակարգերում:
Այդ ախտով վարակված է թէ ամենայն տի-
չքաւորութեան մէջ գտնվող բանւորը և թէ հա-
րուստ վաճառականը, թէ տղէտ գիւղացին և
թէ կրթված ինտելիգենտը. Ն. գուցէ ոչ մի ազ-
գի մէջ յուցամիջութիւնը այնքան խոր արժատ
չէ գցել, որքան հայերի մէջ: Յուցամիջ է թէ
աղքատը, թէ հարուստը, թէ կինը, թէ տղամար-
դը, թէ ծերը, թէ երիտասարդը:

Տեսնում էք մի գիւղացի, որ ամբողջ տարի-
ներ Բաղարայանում, կամ մի ուրիշ թղթաբուծ ա-
հալին չարձաբանքներ, նեղութիւններ կրելով,
դառն քրտինքով ձեռք է բերել մի քանի ռուբ-
լի: Այդ մի քանի ռուբլով նա, հայրենիք վերա-
դառնալիս, իրան դուրս և դարդարում է ու
այնպէս երևում գիւղում: Տարիների ընթացքում
նա կերակրվում է չոր հացով, բաւականաւոր
է պատառոտված ու կեղտոտ շորերով, և այդ
բոլորը նրա համար, որպէս զի, մի քանի կո-
թոյններ, որ տանեն. Օ՛հ, նա կրկին տանողներն
ոտները, հողը կը լիզի, կաղաչի, արտասուք կը
թափի ծովի չափով և կը փրկի Օհանին: Տուն
եկաւ հաւաքով, իր գլխի անցքը պատմեց Օհանին և
վերջինս նրան հանգստացրեց, ինչպէս կարող
էր: Բայց Նիկոնն այդ բանով չը բաւականա-
ցաւ, նա մտեր գնեց, սրբերը դնեցը վաղեց
մօր հետ, աղաչեց, շատ արտասուք, որ հզօր
սուրբերը իր կարմիր արևը չը սեպնեն:

Սակայն այդ վիճակը երկար չը տևեց. մի օր
զինուորական կօմսոսին եկաւ: Առաջին զին-
ւորագրութիւնն էր Ռ... գիւղը սարսափով բռնու-
վեց, անգէտ գիւղացիների, պառաւ մայրերի,
զինուորացու ամուսիններ կամ եղբայրներ ունե-
ցող ջահիլ կանանց համար այդ փայլուն նշա-
նազգեստներով, սրբերով, ունեցանքով մարդիկ
ասես թէ դահիճներ լինէին, որոնց յանձնված
էր գլխատել գիւղի բոլոր 21 տարեկան երիտա-
սարդներին: Նիկոնի պատարանի դրանն ասեց
զգեղու տեղ չը կար. ոմանը արտասուք էին,
ոմանը ծնկներն էին ծեծում, ուրիշներն աղո-
թում էին: Այստեղ էր Նիկոնն իր մօր հետ,
այստեղ էր նաև Գրիգորը, ինչպէս խեղազար:
Ներսիս վիճակ էին հանում: Աչքերը դատա-
րանի դրանը սեղանում ամենքը սպասում էին:
Շատերը դուրս եկան մերթ ցնուցեան, մերթ
էլ ողբի առարկայ դառնալով: Վերջապէս դուրս
եկան նաև Օհանը, նա զինուոր էր... Նիկոնը
միջեց Նիկոնի համար. նա մօր գրկում մարեց
և ուշաթափ տուն տարվեց:

Օհանը զինուոր գնաց. մի քանի ամսվայ ա-
մուսնական կեանքից յետոյ Նիկոնը համարեա
մնաց այրի. գնէր նա իրան այրի էր համարում,
մինչև իսկ սե ձգեց գլխին, հարեաններից ո-
ման էր միջնորդութեան եկան:

III

Օրեր և ամիսներ անցան. Նիկոնից տան վրա
մի նոր սե էլ եկաւ. Գրիգորը, տան միակ տղա-

պէկներ յետ դեցեմբ, կարողանայ ոսկի ժամանակը, ոսկի գոտի առնել, գեղեցիկ հագնուի: Եւ դրա միակ պատճառն է ցուցամուրթները, մասնաւորութեամբ: Եւ այդ դատարկ մասնաւորութեանը բաւարարութիւն տալու համար մեզանում մարդիկ ինչ զրկանքներ ասես յանձն չեն առնում, մասնաւոր կանաչք: Որքան երկպառակութիւններ, ընտանեկան փոթորիկներ են առաջանում չորսը մասնաւորութեան այդ զրկանքի զգացմունքներն: Մեր մէջ շատ կան այն տեսակ կանաչք եւ օրիորդներ, որոնք պատրաստ են նոյն իսկ օրերով քաղցած մնալ և իրանց անձը ենթարկել հազար ու մի զրկանքներ, միայն թէ ունենան չքեղ հագուստ, որով կարողանան փայլել երեկոյններում, պարահանդէսներում: Օ, որքան երջանիկ է մեր չքեղ հագնւած և ապարանջաններով ու մատանիքներով ծանրաբեռնված օրիորդը, երբ թատրոնում, առաջին կարգերում նստած, նրա վրա նախանձելով մատնացոյց են անում նրա ընկերուհիները: Այն, նա երջանիկ է, նա բաղդատը է, բայց նա խղճալի է, ինչպէս խղճալի է Աֆրիկայի այն վայրերին, որ կանխ է իր թիկն ու չընկերներին զանազան զոհողոյն ապակիներ և երջանիկ է զգում իրան:

Բայց այդ այնքան ցաւալի չէ, որքան այն, որ մեզանում ցուցամուրթեան առարկայ է հանդիսանում և ուսումը, գիտութիւնը: Մարդիկ ուսում են առնում, գրքեր են կարդում, դարեւաբանութիւն են ձեռք բերում լոկ նրա համար, որպէս զի փայլեն հասարակութեան մէջ: Դա մի շատ ցաւալի երևոյթ է, որ պակաս չէ տաճարած մեր հասարակութեան մէջ: Օրինակ, տեսնում էք մի երիտասարդ, կամ օրիորդ, որ տեղեկութիւն չունի ամենակենսական և անհրաժեշտ առարկաների մասին, ուսումնասիրում է այնպիսի բաներ, որոնք դուք չեք հարկաւոր չեն գալու նրան: Նա չէ սովորում այդ բաները կանխքին մէջ երբ և ինչ օգտակար կերպով գործադրելու համար, նա սովորում է միայն նրա համար, որպէս զի ուրիշներից յետ մնացած չը լինի, որպէս զի ինքն էլ կարողանայ ցոյց տալ իրան: Նա սովորում է նոյն այն պատճառով, ինչ պատճառով, որ նա իրան զուգում ու զարդարում է: Այս տեսակ ցուցամուրթները նոյնքան դատարարներ է, որքան և փարթեմ օրիորդի ցուցամուրթները: Այս անտու վարակված է մանուկանք մեր կիսախնայողներն զատակարար:

Չը գիտեմ որ գործը, թէ գիտնական ասել է, թէ մի բուռն բարի գործը արժէ մի հետեւորդի գիտնականութեան: Մեր կարծիքով, ասելն պէտք է ասել. թէ մի բուռն բարի գործը անհամեմատ շատ արժէ: Եթէ հասարակական կարծիքը համապատասխան լինի այդ մտքին, այն ժամանակ վերջին տեսակի ցուցամուրթները այնքան էլ չեն տարածվի մեր մէջ: Գծադրաբար, մեր հասարակութիւնը դեռ մի այնպիսի անհասունացած վիճակի մէջ է գտնվում, որ նոյն իսկ

մարդը, յանկարծ խմել սկսեց. վիշտն է պատճառ արեւոյ, թէ չարը կապից այդ մարդուն—այդ յայտնի չէ, միայն նա խմում էր ու խըմում: Օջախը բանդվում էր: Այդ բանը Նիւտոնին տարօրինակ էր թւում. Օճանը որ չը կար, Նիւտոնը տուռն էլ լինել չէր կարող: Ամեն տեղ հարեցողը մի աստուածային պատիժ է իր տան, իր ընտանիքի համար, որին նա շատ անգամ զրկում է հացի նոյն իսկ վերջին սպասուհի, սակայն զրկել հարեցողն ասելի սարսափելի է, որովհետեւ հանդարտ գիւղացին ընած գազան ունի իր սրտում, երբ բարկանայ, երբ զրգովի, երբ մանաւանդ հարբի, այդ գազանը զարթնում է, և այն ժամանակ վայ նրան, ում վրա կը յարձակվի այդ գազանը: Փոքր հայրը հիճ է դառնում, սիրով ամուսինը անդալայ, հիճ է:

Գրեգորի սրտում ընած գազանը վաղուց է ինչ մտնում էր այն ատեղութեամբ, որ նա տաճարում էր գէպի իր բէխէրը հարսը: Գրեգորիներում սաստիկ հարեցողը յետոյ, նա գտնում գոչումով, հարսին ուղղած թիւր յայտնայնքներով փողոցներից շտապ-շտապ գէպի տուն էր գալիս. դեռ բալիկ դռնից տանեցիկ լսում էին նրա սպառնական ձայնը ու յիշեցները: Կինը խոյս էր տալիս գէպի կտուրները. հրապարակի վրա մնում էր միայն Նիւտոնը, որ իբրեւ ջահիլ հարս, դուրս փախչելու, օգնութիւն աղաղակելու համարաւորութիւնից զուրկ էր և անա կատարած տարբեր նրա վրա էր յարձակվում և ձեռնում անողորմ կերպով. «Ոջախս բանդեցիր, հացթուխի աղջիկ, ունում էր հարեցողը, բէխէրը ոտըդ պիտի ջարդեմ»:

Ում դիմէր, ում գանգատէր Նիւտոնը. կինը գիւղում բողբոջելու իրաւունք չունի, մանաւանդ եթէ նա ջահիլ է, հարս է, և Նիւտոնը կրում էր այս մարտիրոսութիւնը: Նա արհամարհված, անարգված էր. այդ վիճակը կամայ-կամայ նրան

մի բուռն բողբոջելն անօգուտ և անպտուղ գիտնականութիւնը ասելի մեծ յարգանքի է արժանանում, քան մի մեծ բարի գործը: Ահա թէ պատճառն ինչ է, որ մեր գիտուն ու զարգացած մարդիկ շատ ունենք, իսկ գործ կատարողներ քիչ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, այս տարի լրանում է Ներսիսեան դպրոցի գոյութեան և օթ առնալու 50-ամեակը: Գաղտնի նախկին աշակերտներից շատերը և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, դպրոցի տարեկան հանդէսի օրը, որ տեղի ունեցաւ փետրվարի 14-ին, ուղարկել էին, յօդաբանի առիթով, շնորհակտութիւններ և բարեմաղթութիւններ: Մեզ խնդրում են յայտնել, որ եօթանասունհինգամեակը լրանում է այս տարվայ աշնանը, երբ տեղի կունենայ և յօդաբանի կատարումը:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ, լրագիրներ խօսքով, մտադրութիւն կայ վերակազմել հրէական տարրական դպրոցները: Մտադրութիւն կայ այդ դպրոցները ենթարկել ընդհանուր տեսչական ասելի խիստ հսկողութեան՝ չը զրկելով նրանց մի և նոյն ժամանակ և հրէական համայնքների հսկողութիւնից: Լուր է պատում, որ այդ դպրոցներում աւարտող աշակերտներին կրթական համապատասխան արտօնութիւններ կը տրվեն զինուորագրութեան կոչվելու ժամանակ:

Շուտով Թիֆլիսում կունենանք մի նոր հոյակապ շինութիւն: Արտիստական ընկերութիւնը ու թէ անհամար Գոյովիստիկ պրօսպէկտի վրա, Կրուսոյի դիմաց, Բէյտէրին պատկանող հողի վրա, կառուցվում է մի ընդարձակ շինութիւն, որ իր մէջ պէտք է պարունակի թէ թատրոնական դահլիճ, թէ բազմաթիւ սենեակներ ընկերութեան համար և թէ ուրիշ անդրաշինարարական արտօններ, օրինակ, մագազին, հիւրանոց և այլն: Արտիստական ընկերութիւնը յոյս ունի, որ նոյն իսկ այս տարվայ աշնանը արդէն նա կարող կը լինի տեղափոխվել իր նոր բնակարանը: Շինութեան գործն աշտոնեցնելու և Արտիստական ընկերութեան մշակված նոր ծրագիրը իրագործելու համար, կազմված է մի մեծ ընկերակցութիւն խոշոր կապիտալով:

Գաղթականների համար հիմնած անպատարանհիւանդանոցի մասին պ. Յ. Խաչատրեան «Արժանեք» լրագրի մէջ տպել է հետեւել բացատրութիւնը. «Հիւանդանոցը հիմնված էր Կովկասեան Բարեգործական ընկերութեան ձեռքով և մինչև 1898 թվ. հոկտեմբեր ամսի 15-ը զբաղվում էր Թանգոյեան դպրոցի շինութեան մէջ: Ընկերութեան խորհուրդը դեռ յոյսով ամսին

բնական էր թւում. չէ որ ինքը «բէխէր էր», օջախը բանդեց. նա հաստատում էր այդ բանին: Նրան դեռ մանկութիւնից հաւատացրել էին, որ կայ բարի ոտը, չար ոտը. ինքը չար, բէխէրը ոտը ունի, ուրեմն և պիտի տանջվի, որովհետեւ չարքերն պէտք է տանջվի. միւս կողմից երբ Օճանը չը կայ, թող իրան ձեռքն, նեղեն, տանջեն. չէ որ ինքը մի այրել է, մի խեղճ, անարգ ված անտէր—անտէրական կնիկ: Նա այլ ևս ոչ ըստ ունէր, ոչ հանդիստ. ցերեկը Գրեգորն էր նրան ձեռնում, տանջում, անարգում, գիշերը իր միայնութեան սարսափին էր պատում:

Օճանի զինուոր գնացող յետոյ այսպէս էր ապրում Նիւտոնը: Նրան միակ միջնորդութիւն իր մայրը կարող էր պատճառել, բայց Գրեգորը մայրուց արգելել էր նրան իրանց չեմբից ոտը ներս դնել: Այսպիսով մօր և աղջկայ հաղուս, զէպ տեսակցութիւնը կատարվում էր զրոյում, չի ափսոս: Սակայն Նիւտոնը մօրից ծածկում էր իր կացութիւնը, չէր խօսում ամենօրեայ աւարտանքի, ձեռի մասին. նա ամաչում էր իր տագրի գազանային վարմունքը, իրանց տան անարգանքը: Եւ այնպէս գցել հարեանների խօսակցութեան նիւթ դարձնել իր դրութիւնը. իր սև օրը բաւական էր համարում, թող գոնէ սրա վրա չաւելանար դրսի խայտառակութիւնը:

Բայց մի օր մայրը նրա երեսի վրա կապոյտ նշան տեսաւ. երբ պատճառը հարցրեց, Նիւտոնը պատասխանի փոխարէն սկսեց դառնալիս արտասովի. ծածկելն այլ ևս անհնարին էր, և պատճառն իմացաւ բոլորը, իմացաւ թէ ինքն էր իր աղջկին: Գրեգորի պառնակները հնաբաղէս են. հէքթարներն անգամ նրանց յատկացրել են մերթ ժոյկի, մերթ վսուկ հրաշագործի, մերթ չար ոգու դերեր, որոնք այսպէս թէ այնպէս խաղում են նոյն իսկ հերոսների ձախտադրել հետո Նիւտոնի մայրն էլ գիւղացի

յայտնել էր, որ սեպտեմբերի 1-ից նա այլ ևս անկարող կը լինի հիւանդանոցը պահել: Սեպտեմբերի վերջին ես տեղեկացայ, որ հիւանդանոցի բնակարանը պէտք է անյապաղ յանձնվի ուսումնարանական դիւրեկցիայի ձեռքը: Հիւանդանոցում մնացած հիւանդները այն տեսակի էին, որ չէին կարող անխնամ մնալ: Այդ պատճառով և նախնական իշխանութեան դիտութեամբ ես ընդունեցի ինձ վրա այդ հիւանդներին հոգաւարութիւնը և նրանց դեռեւեցի հաւաքարում վարձած մի յատուկ բնակարանում, որտեղ տանել տուի և հիւանդանոցի փողարկութեամբ կահկարասի: Մինչև նոյեմբերի 1-ը ես վերջերի ինձ վրա բնակարանի, վարելիքի, լուսաւորութեան, ծառայի, կերակրի ծախքը, իսկ դեղեր ձրի ստացվում էին քաղաքային բուժարանից. բժշկական օգնութիւնն էլ ձրի կերպով անում էր և մինչև այժմ շարունակում է անել բժիշկ Գուրուզով: Նոյեմբերի 1-ից յետոյ ծախքերը անում էի այն 500 ռուբլուց, որ բարեգործական նպատակով յանձնել էր ինձ տիկին Նիկտերինէ Նադիրբեկ: Հիւանդանոցը բաղկացած է երեք սենեակից, խոհանոցից և գալիքից: Միջին թիւով ամիսը լինում է ոչ ասելի քան երեւոյն հիւանդ. օրական ծախսը մարդու վրա հասնում է 23 կոպէկի: Տիկին Նադիրբեկին տուած 500 ռուբլուց ծախված է. նոյեմբեր ամսում 69 ռուբլի 97 կոպէկ, կերակրեքին 90 ռ. 58 կ., յոնվարին 100 ռ. 85 կ., բնակարանին մինչև փետրվարի 1-ը 48 ռուբլի, ամառվայ ամիսներում գոյացած պարտքը վճարմանը 65 ռուբլի, 27 հիւանդի հագուստի, դեղի և կերակրի աւրված է 72 ռուբլի, հիւանդանոցի կահկարասիքի 42 ռ. 75 կ., ընդամենը 489 ռ. 15 կ. ծախքը, ուրեմն մնում է չը ծախված առ. 1 փետրվարի 10 ռ. 85 կ.:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Երէկ, ամսին 15-ին, մասնաւոր նամակներից իմացանք, որ Կասպից ծովի հարաւային նաւահանգիստներից մէկում—Մէլէդիւնում պատահել է հետեւեալ տխուր դէպքը: Երեւանից նաւակով նաւահանգիստ իջնելիս (շոգինաւը կանգնում է նաւահանգիստից երկու վերստ հեռավորութեան վրա) նաւակը շրջվում է և ծովի ակիւնների զոհ են դառնում Մէլէդիւնի «Կապիզ» և Մերկուրի» ընկերութեան գործակալը իր երկու գործակալներով և մի բժիշկ: Դրա նման մի դէպք ևս պատահել է առաջներում մի քանի զոհերով:

ՆՈՒԻՍԻՑ մեզ գրում են. «Նուիսի գերեզմանոցի ճանապարհը 200 սաճնաչափ տեղ ընկած է անկամուրջ «Կոճան» գետի քարքարոտ ընթացքով, որով շատ դժուարութիւններով էին անցկացնում հանդուցեալներին: Պատահում էր, որ մի-մի անգամ, գետը վարարած ժամանակը, յուրեք երեքստու ձեռքերով տանվող դաղագործ Նրկար տարիների ընթացքում այդ մասին

պատահ էր և հնարագէտ պառաւ. նա չէր կարող իր դաւակնի, իր աչքի լոյս Նիւտոնի այս գործողութիւնը տեսնել: Պէտք էր մի ճարտար, բայց ինչ ճար...

Գիտես, Նիւտոն, որ եթէ այդ թաղած արեւոյդ չը լինէր, Օճանին սաղկած չէին տանի: Եւ, նա ինչ անի որ, ինչի իմ սև բաղդիցը չէր, իմ ոտն էր բէխէրը:

—Չէ որդի, չէ: Ասում են, որ Օճանը տանից մենակ լինէր, նրան «աղաղած» չէին տանի, նա կը լինէր տան մեծը, տան մեծին չէն տանում. հիմա էլ որ այս չորացածը գետինն անցնի, Օճանին յետ կը բերեն:

Նիւտոնը մնաց մտքերի ծովի մէջ: Այն ինչ անաց մայրը. «ասում են», որ Օճան իր եղբոր զոհն է, եթէ որ սա չը լինէր, նրան չէին տալ նի, նա այժմ այստեղ կը լինէր, տունը չէն, անքնը բաղդաւոր. եթէ հիմա էլ այս կարմիր թիւով, սարսափելի անքնով արեւոյդ թշուառակներ, իր այդ զրկելի դահլիճ մեռնի, Օճանը կը գայ, մոռնում էր Նիւտոնը: Ասում են, բայց ինչ է ասում, այդ մասին նա չէր մտածում: Գիւղերում ոչ ոք այդ մասին չի հարցնի, այդ բնական է, որ ամիսն էր պատասխանեալ հասարակական կարծիքի ամենամեծական արտայայտութիւնն է: Ազատ մտքի չլինում է այդ այդ եռաւանդ աւարտը բաւել, որ արգելում է որ և է ընդհանրաւորութիւն, որ և է հարց ու փորձ. չը գիտես որ տեղից է նա ծագում առնում, ինչ է ասում, ինչ է ասում, ինչ է ասում: Նիւտոնը միայն կը գատասխանեալ ասում են: Այսպէս կայր է գիւղը իր հաւատի, իր ատեղութեան և իր համակրութեան մէջ:

Նիւտոնն էլ հաւատաց այդ ճշտում ենա-ին: Կարող էր այնուհետեւ երեւակայել նրա անասման ատեղութիւնը գէպի այդ արեւոյդը, որի գոյութիւնը նա անուհետեւ նկատում էր իր

մտածող չեղաւ, և միայն այժմ, նոր յաջողութեամբ, հաւաքելով ժողովականներին, առաջարկեց գնել գերեզմանոցին կից այդտեղերից մի ուրիշափ տեղ, որ միանգամայն նոյնեղները գետից ազատված լինեն: Փետրվարի 7-ին համաձայնութիւն կայացրեց յայդ. Մամիկոն Ելչիբեկեանցի հետ, որչեցին 1500 ռուբլով, եկեղեցական փողերից, գնել նրա ամբողջ այգին:

ՎԵՐԻՆ-ԱՂՎԱՆԻՑ մեզ գրում են. «Ներկայ փետրվար ամսից մեզանում բացվել է կերակրանոցայ դպրոց, շնորհիւ մեր ուսուցիչ պ. Բ. Յարութիւնեանի: Ուրախալի է տեսնել, թէ ինչպէս 40—50 տարեկան անդադրէտ գիւղացիները, նստած մանկական նստարաններ վրա, եռանդով աշխատում են իրանց կոչուցած մասնաւոր գրչի ու մատիտի սովորեցնելը:

ԳՐՈՒՅՑ, մեզ գրում են. «Նախնայնքը այստեղ լաւ են. ձիւնը վաղուց հալվել է, բայց մթնոլորտը շատ թանգ են: Օրինակ, մէկ հաւը արժէ 50—60 կ., պանիրը 25 կ., լուրը 40 կ., իսկ ցորեն, ուրիշ տեղերի հետ համեմատած, ասելի է ժամ է. պուրը շուկայում ծախվում է 90—95 կ., գարին 58—60 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻՑ

Յունվարի 24-ին Նոր տարին սկսվելն ի վեր նոր գործեր չի կան. նորերուն տեղը բռնած չենք: Գարնալ թե թե ի տուած, կը շարունակեն հսկայաբայ յառաջդիմել: Եթէ կուզէք անպատճառ նոր բան մը իմանալ—թէպէտ այն ալ նոր չի համարուի—բողոքովն կմանք դարձած աղգային ընդհ. ժողովին չի տեսած և չարձանագրած մյն ճառն է՝ զոր ատենապարկը Գուրգէն էֆէնդի, փրփրիկ հաւու պէս, ամեն տարի իր աճիւնէն կենդանանալով, կուգայ կը կարգայ Պատրիարքին առջև՝ անպայման գովեստներու դրացի մը ընծայելով նորին սրբապետութեան:

Գուրգէն էֆէնդի, անձնապաշտպանութեան հովանէն քուրդով, հաղու ծնունդին Մեռելոց օրը գտաւ և իր շունչը՝ պատրիարքարանի զահ-լիճ կուգած սրահին մէջ առնելով, «Մշակութիւն» Գիւրգէնը լինելու ձրի ամբաստանութեան մը իր օճիքն ազատեց:

Պատրիարք Օրմանեան, առանց ի նկատ առնելու իր պերճաշուք գիրութիւնը՝ որ օրէ օր մնաց...

Թշուառութիւնների միակ աղբիւր: Եթէ նա մեռնէր, Օճանը կը վերադառնար. բայց ինչ կարող էր անել Նիւտոնը. նա միայն ասում էր իր սրտի, իր հոգու ամբողջ գործութեամբ, մի անօգուտ ատեղութիւն, որ մաղի չափ անգամ չէր թեթեւացնում նրա անտանելի կացութիւնը:

Իսկ մօր մօտ արտասուքի հեղեղներ էր թափում:

—Օ՛հ, մայր, ասում էր նա, հոգիս բերանս է բերել... մի թոյն լինէր, կը խմէի, ինքն իմ ձեռքով վերջ կը տայի այս ևս օրին:

Մայրը նոյնպէս լաց էր լինում և շարունակ ասում էր թէ թոյնը Գրեգորը պիտի խմէ, որ մեռնի ու աղատէ ջահիլ հարսին: Այն ժամանակ էլ Օճանը յետ կը գայ:

Նիւտոնը սարսափ մօր խօսքերից, նրա մաղբը զիջացան գլխի վրա, նրա մէջ սարսափելի ձեռնակալութիւն, յանցանքի հնարաւորութիւն մտաւ:

—Բայց մեզ չէ, գոչեց նա: —Աստուած էլ կը շերի, որդի, այդ ինչ օր է որ դու քաղում ես:

Արդեօք հասկանում էր պառաւ թէ ինչ ուղղութիւն է տալիս իր աղջկայ այրված, մի ելը որոնող սրտին: Նա էլ խօսում էր դառն վշտից խորատկված, յուսահատ: Նրա նից ճար և օգնութիւն էին խնդրում. բայց նա ինչ կարող էր տալ, եթէ ոչ ցանկալ իր սիրտի աղջկայ տանջողի համար մահ և ոչնչութիւն:

Նրանք բաժանվեցան: Բայց աղջիկն այլ ևս կորած և անօգնական չէր համարում իրան: Այնուհետեւ էլ մի քանի անգամ նա տեսնվել իր մօր հետ. թու՛նաւորման ծրագիր կազմվեց և մայրը խոստացաւ թոյն գտնել...

(Կը շարունակվի)

վրա կը դնէ ու չի պակսեր, ո՛ր է գէր մարդ մը տեսած ատեն, «Գիրուկ»-ը միտքը բերելով՝ իր «Սուրբաբան»-ը կը կարծէ:

Մեր պատրիարք սրբազանը թէպէտ հին մարդ է՝ բայց շատ նոր է իր «ճարտարանորոգում»-ը: Բայց լինել, կերել թէ, «փոխաբերութեան» օրինակ չունի, կերել թէ, «փոխաբերութեան» օրինակ չունի, բայց արտաքին չէ, և այս պատճառով է, թէրբը բացատրուած չէ, և այս պատճառով է, որ ան ու սարսափ կաղզէ բոլոր գիրականներուն՝ որ կը վախճան մատնուելէ:

Այս սարսափաբաններէն մէկն էր ողորմելի պ. Գորգէնը՝ Մայր-Դիւանի ճառարան էֆէն-պ. Գորգէնը, որ, վերջապէս, վաղեմի Ամեն. Ս. Պատրիարք հօր չարխափան օրհնութիւնները՝ անց բերելուն հանդիսատէսն մը քաջեց... և Գորգէնը Մշակուի Գիրուկ-ը լինէր... Բնէ հիմալի ենթադրութիւն... Միթէ Սաւուղն ալ դեր կընայ ունենալ մարգարէներուն մէջ և, միթէ ճշմարտութիւններն անվերջ յերեւան հանելու չափ կաղզուրբն է իր գրիչը «Հայկական կրթարան» հիմնադրոց այդ վարժպետը...

Չարաշուք օրեր, ուր դաւաճանութիւն, խար-դաւանք, սուտութիւն, ազգութապաշտութիւն, անհեթ-սուտութիւն, անօրհնութիւն, մատնութիւն՝ մեր Պատրիարքարանի շուրջը՝ իբրեւ օրէնք և արդար-ութիւն կը փառաբանուին, և կը փնտռուի արդար, ճշմարիտը՝ անոր արկունք խնկու հա-մար, աւելի ևս փառաբանուելու, շատապով վերս համար...

Արեւոք վերսկսած է այն աղտոտ դարը՝ ուր Հոռութիւն պապին ամենի ու միամիտ ժողովուրդին առջև փառաւոր երևնալու փառամոլութեամբ, եթէ իրենց հովական պաշտօնին վայել-լուզ գործերով և ուղղամիտ պաշտօնավարու-թեամբ չլին կարող զովաբանուի ժողովուրդէն, ծորուքնին կուսկէպարէին և եկեղեցւոյ բնմին վրա կը նաղաճեմէին:

ՆԱԽԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Ուրբի, փետրվարի 1-ին

Յունվարի 22-ին Ռաճիպ գիւղի ուսուցիչ պ. Ռուստամ Զոհրաբեանց փորձեց անձնասպան լի-նել, բայց չափողեցաւ: Պ. Ռուստամ բնիկ երևանցի է. անցեալ տարի Սուրբուրդի Նաղարգ-գիւղում ուսումնարան էր բաց արել մէկ ան-յայտ բարերարի ծախսով, չէր գիտեմ ինչ պատ-ճառաւ անցեալ ամառ փակեց Նաղարգէի ու-սումնարանը և եկաւ տեղի ու դիմեց առաջնոր-դական գործակալ Աւետիս քահանայ Շաղոյեան-ցին, որ Բարանդուղի թրքաբազմի գիւղերէն միոյն մէջ իրեն ուսուցչութեան պաշտօն տուաւ: Քահա-նայն նկատելով, որ արդէն Բարանդուղում Հայու-հեաց ընկերութեան ծախսով երկու ուսումնա-րան բացվել են, որոշեց, որ քաղաքից կէս ժամ հեռի գտնվող Ռաճիպ քաղաքայ գիւղում ու-սուցչութիւն ընէ: Պարտիզ միւսից իր պաշտօնը Քահի մը օր անցաւ, Ռուստամ իրկին ներկայա-ցաւ քահանային. այս անգամ ինքրեց, որ իրան ամուսնացնէ: Քահանայն չը մերժեց, միայն նը-շանափ ընտրութիւնը պարտին թողուց. հա-մաճանութիւն երկուստեք. իսկ պսակի արարո-ղութիւն կատարելն իրեն վերապահեց: Պ. Ռուստամ ամենայն յաջողութեամբ գտաւ մի օրիորդ, նշանադրութիւնը անմիջապէս յետոյ ստացաւ պսակի հրամանագիր և ուրախու-թեամբ վերադարձաւ գիւղ: Պ. Ռուստամի ընտ-րած օրիորդը Նախիջևան-Փեմի գիւղիցն էր. նը-րա ծնողք բաւական կարողութեան տէր են. նրանք պարտին պայմանաւ փեայէ էին ընտրել: Որովհետեւ անձնաօթ երկուստեք չափ փառա-հովութիւն չը կայ Պարտիստանում, հետեւաբար նրանք առաջարկել էին պ. Ռուստամին, որ 150 թրիւն (300 ռուբլի) արժողութեամբ կալուածք գնէ, յետոյ իրենց աղջկալ ձեռք խնդրէ: Ռուս-տամն այդ պայմանը սիրով ընդունել էր և եկել ստացել էր հրամանագիր:

Սրանից յետոյ ինչ է տեղի ունեցել, ևս այդ չը գիտեմ: Միայն լսեցի, որ պ. Ռուստամ քանի մը շարքով նշանադրել հետ ապրելէն յետոյ, յետ կը քաջուի՝ առաքելով թէ ուրիշ մը պատ-րաստ է առանց պայմանի իր աղջկիւր տալ:

Յունվարի 22-ին Շաղոյեան քահանայն գնացել էր Ռաճիպ գիւղիցն ընկերութեան. Նախիջևան-Փեմիցն ծնառէր քահանայն, չայր Գրիգոր, հին կը գայ և կը խնդրէ չայր Շաղոյեանին, որ բացատրութիւն պա-հանջ պ. Ռուստամից իր արարքներն մասին: Հայր Շաղոյեան կը հրաշքի Ռուստամին. բայց զո՞ն չը լինելով նրա բերանացի բացատրութիւ-նից, կը հրամայէ որ գրութեամբ ինքիւնք ար-դարապէս: Պ. Ռուստամ կընդունի և կը մեկնի: 10 վայրկեան չանցած ատճառակի երկու ձայն կը լսվի: Գիւղացիներ շփոթած լուր կը բե-րեն տէր հօր՝ թէ Ռուստամ իրան սպանեց: Քահանայն դուրս կը վազէ, Ռուստամին ուշաթիւր ընկած կը գտնէ. գնդակներ երկուքն ևս կողքից

անցել էին. չափելը բաւական այրվել էր, մարմնին վրայ չէր եղել: Իրաց վիճակին լա-ծանօթ չը լինելով, չեմ կրնար որոշ դադարա-մը յայտնել. միայն ցաւում եմ խեղճ իրողացինե-րի վիճակին: Սայմատեցի պատուաւոր վաճա-ռականներ մարդասպան չէին, բայց տաճկա-տանցի ծերունիի մը անյայտանալուն պատճա-ռաւ. 4000 թրիւն տուեցին քանի մը ամիս առաջ: Ինչ կը լինէր Ռաճիպի հայոց վիճակ, եթէ պ. Ռուստամի՝ իր վրա արձակած գնդակ-ները ներդրութիւն: Պարտիստան է. օրէնք ըստա-ծին վաղուց գաղթել է այս երկրից, արեւան դի-նը՝ միշտ արեւան գին է. ուղում ևս դու քեզ սպաննիր կամ ուրիշից մը սպանվի, տարբե-րութիւն չը կայ, արեւնի չի կորսնցնէ:

Նամակս ծրարելէն յետոյ արժանաւատ աղ-բիւրից տեղեկացայ, որ պ. Ռուստամ երէկ դի-մել է տեղւոյս միւշտայիղին և ընդունել է իս-լամութիւն. այժմ մուշտայիղի տանն է: Ահա քեզ ուսուցչի դիմակով հրէջ:

Գ. Կ.

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Կէմալսո «Աստոր» լրագրում հեռեկան կերպով է ընտրուում Քրանիական հանրապետութեան նորնորի նախագահ Լուրէին. «Նա հին ձեռի ճշմարիտ հանրապետական է և արիական հա-րաւոր»-ու չար և ոչ մեծամիտ, բայց իր հաշիւ-ները չը մտաւորը: Կարելի է գրազ գալ, որ նը-րան չի յափշտակ մեծութեան ցնորքը. նա կը լինի բուրժուա նախագահ, պարզ իր յարաբե-րութիւնների մէջ և հարկաւոր չի համարի փո-ղիք փելը տալ իր իրաքանչիւր փաշտոյի հա-մար: Աւելորդ է, ի հարկէ, առել, որ նա լաւ Քրանիական է և որ նա արժանապատուութեամբ կը պահէ իրան օտար պետութիւնների վերա-բերմամբ: Ինձ ամենին յայտնի չէ նրա կարծի-քը Բրէյթֆոլսի գործի մասին, բայց ես գիտեմ, որ նա յամենայն դէպս չարատաւարեց իրան այն ստանտութիւններ և կեղծիք հնարողների հետ, որոնք չըպատկանին Մէլլըք Թորին, և աշխատում էին նախագահին իրանց զինաւոր գործիք չինել: Այժմեան սարսափելի ճգնաժա-մին վերջ տալու համար հարկաւոր չէ հանձար լինել. բաւական է հասարակ ազնւութիւնը: Ի հարկէ, բաշտութիւն էլ պէտք է ունենալ ասպա-րէզ դալու ափրիկական մի քանի զինուորների հետ կղերականների կապած դաշնակցութեան դէմ:

«Լուրէ մի պատուելի բուրժուական ընտա-նիքի որդի է: Նրա հայրը կառուածաւոր էր: Այժմեան նախագահը ուսում էր առնում Պարի-զում շատ աղքատիկ միջոցներով: Լուրէ սի-րում է պատմել, թէ ինչպէս ինքն, ուսանող ե-ղած ժամանակ, Տուրքմի փողոցի վրա գտնվող տներից մէկի վեցերորդ յարկումն էր ապրում, որ նա վարձած ունէր մի փոքրիկ սենեակ: 1864 թիւն Լուրէ պարագայում էր փառաբա-նական մի բիրտում Մէլլինի հետ, և այն ժա-մանակից նրանց մէջ սկսվեց մօտիկ ծանոթու-թիւն:

«Լուրէ պատկան է երկաթուղիական Պիկարի աղջկալ հետ և երեք որդի ունի. մեծ աղջկալ Սարալլի, դատաւոր Սուրէյթում-դէ-Ալէ-Պի հետ է ամուսնացած: Անդրանիկ որդին 25 տարեկան փաստաբան է. կրտսերը 5 տարեկան է: Լուրէի մայրը դեռ կենդանի է. նա 80 տարեկանից անց է: Լուրէ տունըն անց է կացնում միայն Սոն-տէլիմարում, ուր մեծ ժողովրդականութիւն է վայելում. այնտեղ նա ամենը հետ եղու-ով է խօսում: Սոնտէլիմարում նա մի փոքր տուն ունի»:

Երկամեայ խռովարար: Իբրեւ ընտրու-մի նմուշ այն սարսափների, որ կատարում էր սպանիական տիրապետութիւնը մինչև վերջին ժամանակներս Կուբա կղզում, «Times»-ի թրդ-թակիցը հաղորդում է հետեւեալ հետաքրքրի-ղէպը: Երջելով սպանիական զորքերի մէջ, հրամանատար գեներալ Վէյլեր մի անգամ մո-տեցաւ դրոպակտ Սանիեցի տանը: Վերջինիս մօտ այդ ժամանակ ապրում էր երկու տարեկան մի որդ, որի ապագամը հօրը և մօրը հրացանի բռնելով՝ մահացրել էին: Գեներա-լը Վէյլեր ցանկացաւ. տեսնել երեսպային, ո-րին իսկոյն և եթէ բերին նրա մօտ: Չարաճիկ մանուկը, առանց քաշվելու՝ բարձրացաւ գեներա-լի ծնկների վրա և սկսեց խաղալ նրա զին-ւորական շքանշանների հետ, ժանկական անթիւր աշխոյժով:

—Կարողանում է արգօք այս տղան խօսել, հարցրեց գեներալը:

—Գեներալը հարցնում է. կարողանում էս դու խօսել, դիմում է գնդապետը իր սանին:

—Cuba libri! Cuba libri! (Աղան Կուբա) — գոչեց մանուկը:

Գեներալը ոչինչ չստաց: Տանելով ձեռքը դէպի գրպանը, հանեց այն մեծ ատճառակը, որից նա չէր բաժանվում և, մօտեցնելով նրա բերանը՝ ժպտող մանուկի բերանին, ամենահանդարտ և զանախով ասաց.

—Աղան, փոքրիկ խռովարար, մի փոքրիկ կնկնել այն, ինչ որ նրա սասցիքը:

—Cuba libri! Cuba...

Բայց թշուառ երեխան չը վերջացրեց. որո-տաց սարսափելի ձայնը, — և մանուկը շարժված գանգով փռվեց սառած, փայտացած գնդակա-

տի ոտքերի առաջ: Միւս օրը գնդապետին տա-րան խեղադարձերի տուճը. նա արդէն ցնորվել էր, իսկ երկու չարթիք յետոյ՝ նրա կնոջը մե-ռած գտան սպանված մանուկի գերեզմանի վրա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 17-ին

ԽԱՐԿՈՎ: Այսօր, ժամը 1-ին այրվեց ակցիո-ներական ընկերութեան հասցին Ջրաղացը: Ծո-նարանը, միջերանոցը ալիւրով և գրասենեակը աղաւթեց: Ալիւրի փոշիի պայթիւնից փրկեց տա-նիքի մի անկիւնը և սպանեց ներքե կանգնած ծառայողին: Հրէջջիցից երկուսը վիրաւորվա-ծ են: Ոստիկանագետը և իր օգնականը ստացել են ծանր վէրքեր: Ջրաղացի շինութիւնը փրկեց: Ջրաղացը ապահովադարձ էր զանազան ընկե-րութիւններում 300 հազար ռուբլիով: Վնասը և այրվելու պատճառները դեռ յայտնի չեն:

ՀՌՈՒՄ: Երէկ, զիպումաների ընդունելութիւ-նից յետոյ, Լեւոն XIII-ի գահ նստելու առաջիկայ տարեդարձի առիթով, պապը իրան վատ ըզ-դաց, մանաւանդ, ինչպէս այդ պատանում էր յաճախ վերջին օրերը, խիստ դող գրաց նա: Այսօր առաւօտեան պապը գանգատվում էր կողքի ցաւի վրա: Բժիշկ Լապպոնի որոշեց, որ պապը հիւանդ է ջերմով. այցելեց երեք անգամ, խորհուրդ տուեց պառկել և պահպանել կատա-րեալ հանգստութիւն: Անվիճելի է համարվում, որ մարտի 2-ի ընդունելութիւնը պապի մօտ, և նրա ներկայութիւնը մարտի 3-ին գահակա-լութեան տարեդարձի առիթով, տեղի չի ունենայ:

ԲԵՐԼԻՆ: Բէլլախտայի բրիգադային յանձնա-ժողովում Բիւրջ յայտնեց, որ ի նկատի առնե-լով Տեանդիտում գերմանահպատակների վրա արած յարձակումները, ինքն հրամանագրեց Պէ-կինի դեսպանին կտրական կերպով յայտնել չի-նական կառավարութեան, որ եթէ յանցաւոր-ները խիստ պատժի չենթարկվին, կամ թէ միւս անգամ տեղի ունենան նմանօրինակ դէպքեր, — դա ծանր հետեանքներ կունենայ:

ՊԵԿԻՆ: Հիւսիսային երկաթուղիների նախ-կին գերեկատու Խուի դէմ սկսված քննութիւնը վերջացաւ և դատարանը արդարացրեց նրան: Նա մեղադրվում է այն բանում, որ վատ էր կառավարում իրան յանձնած գործը:

ՊԵԿԻՆ: Պատմիկ-Պուի կառուցվող երկաթու-ղու վրա, 80 մղոն հեռավորութեամբ դէպի հա-րաւարեմուտը Պէկինից, յարձակում տեղի ու-նեցաւ: 200 չինացիներ ոչնչացրին երկաթուղու նիւթերի մի մասը և փորձեցին իրանց հետ տանել կամուրջների մասերը: Տեղական ոստի-կանութիւնը անգոր գտնվեց: Երկաթուղու ծա-ռայողները յարձակման չենթարկվեցին:

ՄԱՌԻԻ: Լուր է պարտում, որ սենատի ձայ-նատուութեան պատճառով, Սաղաստա վտա-նութեան հարց կը դնի:

ՄԱՌԻԻ: Սենատը երեք ձայնի մեծամաս-նութեամբ մերժեց դիմադրական կուսակցութեան հակառակարգիւն, որ վերաբերում էր Ֆիլիպեան կղզիներին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Օտիս հեռագրում է, որ կալի-ֆորնիական կամաւորների մի բաւալիւն մար-տի 1-ին արշաւելու է դէպի Նէգրօս: Վերջին երեք օրերում Մանիլայում հանգստութիւն է տիրում:

ՀՌՈՒՄ: Այսօր, բացի Լապպոնի բժշկից, պա-պին այցելեց բժիշկ Մաղգէնի: Զգուշութեան համար, Լապպոնի գիշերը կանցկացրին պապի ննջարանի հարևան սենեակում: Վատիկանը սո-վորական տեղը ունի: Կտրականապէս հերքում են այն լուրերը, որ իբր թէ պապի հիւանդու-թիւնը ծանր ընաւորութիւն ունի: Մինչև անգամ հաստատուած են, որ 11 ժամ 10 րոպէին պապը անկողնից վերկացաւ, բայց յետոյ կրկին պառ-կեց, Լապպոնի խորհրդով, որը գրաւ պապի մօտ ջերմ, դողոց և ցաւ մէջընում: Այսօր կար-դինալ Բամպոլլա մի քանի անգամ այցելեց պա-պին: Հաստատվում է, որ մարտի 2-ի ընդունե-լութիւնը և ժամանացութիւնը, որ պէտք է կա-տարէ պապը մարտի 3-ին, վերացրված են, բայց մարտի 2-ին, երեկոյան, այնու ամենայնի տեղի կունենայ զիպումատական ճաշ, որի հա-մար Բամպոլլա արդէն հրաւերներ ուղարկեց:

Կարծում են, որ վաղը կը յայտարարվի պաշ-տօնական բրիլլանտ պապի առողջական դրու-թեան մասին:

ՊԵԿԻՆ: Պէկինի պաշտօնական լրագրում տըզ-ված է մի ցէնզորի զեկուցումը, որով Տեանտու-գի նախագահեալ Չանգ-Ի-Վէյ մեղադրվում է կաշառակերութեան և դեղմունքի դրծելու մէջ: Նոյն զեկուցումն մէջ Լի-Խունգ-Չանց պալա-տակում է չափազանցութիւններ գործելու հա-մար: Կառավարութիւնը առաջարկեց ցէնզորին

կէտ առ կէտ պատճառաբանել մեղադրանքը: ՀՌՈՒՄ: Ստեֆանիի գործակալութեանը հա-ղորդում են, որ Կրետէ կղզու վրա հաստատուն կարգեր մտցնելու և պետութիւնների պատասխա-նատուութիւնը որոշելու համար իրանց յանձն առած պարտաւորութիւնների վերաբերմամբ կըզ-գու ազգաբնակչութեան և սուլթանի առաջ՝ ֆը-րանսիական, ռուսաց և անգլիական կաթնէտ-ները մտադրութիւն ունեն խորհրդակցութիւն կազմել Հեռում Կանէվարօի հետ իրանց դես-պանների միջոցով և իրաւունք տալ նրանց պատ-չաճաւոր վճիռ կայացնել: Մտադրութիւն կայ կրետական գործերի համար մասնաժողովի պէս մի բան հիմնել, Կանէվարօի նախագահութեամբ:

ՊԱՐԻՉ: Վճարեկ դատարանի քրեական ա-տեանի իրաւասութիւնից վերաբնութեան վե-րաբերեալ դատը հանելու նախագծի առիթով վիճարանութիւնների վերակենդու ժամանակ, Լիլ պաշտպանում էր նախագիծը, որպէս խաղաղաց-ման գործ: Ապա հետեւորը պաշտպանում է նա-խագիծը օրինական տեսակետից և ըննադատում է քրեական ատեանի գործունէութեան եղանա-կը, որի վճիռը պաշտաճաւոր հեղինակութիւն չի վայելի: Հետեւորը զարմանալ է յայտնում աղ-գային զօրքի վրա արած յարձակումներին ա-ռիթով և մատնացոյց է անում գեներալ Բօժէի գործունէութեան եղանակի վրա:

ՄԱՐՍԵՅ: Մաղապապարի նախկին թագուհի Բանաւալա հասաւ այստեղ 10 հոգուց բաղկե-ցած օվիտայով: Նրան կը ընկնեցնեն Ալժիրի չըջականերում: Կառավարութիւնը նրա կարգա-դրութեան տակ դրեց մի հոյակապ վիլլա և 24,000 ֆրանկ թոշակ նշանակեց:

ՊԱՐԻՆ: Սենատ: Մօնիս առաքելում է նա-խագիծ դէմ, որը բաց կանչի դռներ ամեն տե-սակ ըռնակալութեան և կոնչացնէր բո-լոր երաշխաւորութիւնները: Լէքէ խնդրում է սենատին քուէարկութեան ենթարկել նախագիծը, որը ամենին չէ չօչափում իրաւունքները: Վերա-բնութեան մասին վիճարանութիւնները վճարեկ դատարանի միացեալ ատեանների առաջ դռնաց կը լինեն, և կը թոյլատրվին առաքելութիւններ եր-կու կողմերին էլ: Կառավարութիւնը հեռուում է իր խղճի ցուցմունքներին: Նա ամենին չէ նա-խալճում դատարանի վճիռը և միայն ցանկա-նում է ճշմարտութիւն, արդարադատութիւն: Քահին որ վերաբնութեան պահանջին համա-ձայնութիւն տրվեց, այժմ շատ ուշ է յետ դառնալ: Սենատից է, որ անկաւորութիւն-ները երևան գան հենց dossier ուսումնասի-րելիս, որովհետեւ միայն այն ժամանակ կա-րելի է թոյլ տալ պրօցէսը անկաւոր համարելու պահանջը: Լեքէ վերաբնութեան մէջ ասում է. «Կառավարութիւնը համոզված է, որ նախա-գիծը կը հանդուստանէ մտքերը» (Մախահարու-թիւններ):

ՊԵՏԵՐԲՈՒԳ: Տեղի ունեցաւ ռուսաց երկա-թուղիների ներկայացուցիչների տարիֆային հա-մագումար ժողովը:

ՀՌՈՒՄ: Բժիշկ Մաղգէնի պապին օպէրացիայի ենթարկեց, որովհետեւ նա վէրք ունի աղզրի վրա: Պապը լաւ դիմացաւ օպէրացիային: Զե-ր մը կորաւ: Բժիշկները յոյս ունեն, որ բարդու-թիւններ տեղի չեն ունենայ:

ՄԱՌԻԻ: Սաղաստա յանձնեց թագուհի-խնա-մակալուհուն միլիտարութեան հրամարակաւի խնդիրը:

ՊԱՐԻՉ: Դատաւորական ընդիշ Ծաբրի տնային խուզարկութիւն կատարելու համար տրված 16 նոր հրամանների պատճառով, տնա-յին խուզարկութիւններ կատարվեցին ժամրու-ն և քաղաքացու իրաւունքների լիզային, «Քրան-սիական հայրենիքի լիզային», լազային պաշտ-պանութեան շահերի լիզային նախագահների, բարտուղարների, դանձապանների և անդամնե-րի մօտ, նոյնպէս և Սենայի դէպարտամէնտի պէրիսցիտային մասնաժողովների նախագահի մօտ: Խուզարկութեան ժամանակ շատ թղթեր են գրաւել:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Գերմանական կառավարու-թեան ցանկութեամբ, Ֆիլիպեան կղզիների վրա գտնվող գերմանահպատակների կեանքի և դոյքի պաշտպանութիւնը իրաւունքների լիզային Մա-յեալ-Նահանգների ցամաքային և ծովային ոյ-ժերին: Գեռ այդ կղզիների ջրերում գտնվող գերմանական պատերազմական նաւը կուղարկվի չինական ջրերը:

ՀՌՈՒՄ: Պապի առողջական դրութիւնը գոհա-ցուցիչ է: Պապը մի փոքր կերակուր ընդունեց:

Օպէրացիան առանց խորհրդի կատարվեց:

ՊԱՐԻՉ: Այսօր կատարվ

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.